Ա՛յլ եւս ժամանակ չկար կորցնելու. միայն գետի ափում անկարելի էր. Ջահաբբան վախենում էր պատերազմել Օսմանցիների հետ, ուստի միակ միջոցն էր փախչել եւ անցնել պարսկաստան։ Ա՛յդ պատճառով հրաման տուեց, որ շտապով ժողովուրդը անցկացնեն գետի միւս ափն եւ ա՛ն այդտեղ "եղեւ լոյս եւ կրճտել առաջնոց." այդտեղ պէտք է ժողովուրդը քամէր դառնութեան վերջին մրուրը։

(Շարունակելի)

Հ. ԱՌԱՋԵՆԱՆ

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ՍԻՒՈՒԿԻՈՑ ՀՆՉՈՑ ԳՈՒՆԱԲԱՐԲԻՐՈՒԹԻՒ

(Շարունակութիւն)

4. Լոյսեր, ձայն, ասացուածներ։

Ներկայիս բարբառին ուսումնասիրութեան իրրեւ լրացուցիչ մաս՝ աւելորդ չենք համարիր ներկայացընել նաեւ անոր մէջ գործածական առածները, ճշդերն ու ասացուածները, ճիշդ ժողովրդեան արտասանած ձեւերովը, որոնք աւելի կատարեալ կերպով գաղափար մը կրնան տալ նոյն բարբառին ձայնական, քերականական եւ համաձայնական օրէնքներուն վրայ, շօշափելի ձեւի մը տակ երեւան բերելով անոր բոլոր ոգին եւ յատուկ նկարագիրը, նաեւ մանաւանդ ընելով այնպիսի լեզուաբանական մանաւորութիւններ ալ, որոնց յիշատակութիւնը գրից առնուած կամ մոռցուած է ուսումնասիրողներու նախորդ մասերուն մէջ։ Աւելորդ է ըսել թէ որ եւ է բարբառի մ՚առածներն ու ասացուածները՝ ինչպէս Եզդոկիոյ բարբառինը, կը ներկայացընեն նաեւ գրական, ազգագրական, բառացուցական տեսակէտներով ալ վերին աստիճանի շահեկան կողմեր։ Անոնք ուղղակի իրենց վերաբերած ժողովրդեան կեանքէն, բարքէն ու հասուցքէն առնուած են, որոնց մէջ որոշակի կը ցոլանայ այն ժողովրդեան տոհմային ընտանեկան եւ ընկերական կենաց պայմանները, ապրած միջավայրը, քաղաքակրթութեան աստիճանը, ապրելու, զգալու, խորհելու, ըմբռնելու առանձնայատուկ եղանակները, սովորութիւնները, նախապաշարմունքներն ու հաւատալիքները, վերջապէս այն ժողովրդեան ամբողջ հոգեբանութիւնն ու ոգին։ Այդ եւ այլ ամէն տեսակ նիւթեր ամբարուած են ասացուածներու մէջ, որոնք ամէն ազգի մէջ ունին մեծ նշանակութիւն։ Աս

Անցանփ հասնեն սա մեղեն, խոփոտ եւլէր խօսուեին'. Շատհէին հրաժարութեանը, պետս մըն ալ չկրնէինք։

Անցուիը մոռցած է'ըննայ։

Անօթին փորը յ'ուռած։

Աչխարհ էրդ նորածոյգին պէս' անդնի. Գիտուններըը խորամանկ, շատ մարդիկ կ'ըլլան։

Ասիւ[1] գեռ բնչնի նրօտ. Բան մը որ հազիւ թէ կը տեսնուի ու կարելի չ'ըլլար վայելել։

Ապէր քոյ, նենէք. (Թրքը. = օրհաս) գէմդ։ Վատնգաւոր պատգամներ ուր մնհուան վտանգը դէմ առ դէմ կը կենայ։

Առանց հրամանի փեշես չի ըրծիր. Ամենէն չնչին դէպքերու անգամ Տիրոջը հրամանովը ու գիտութեամբը տեղի կ'ունենան։

Առանց ատակի' գործած անել. Առանց որ եւ է անհամաձայ եւ անպատեհ միջամտութեան գործ մը կատարել։

Ատամնացաւդ, ցաւերնուան լուսան, իրիկուան հովը։ Գինեմոլներուն գործածած մէկ բանաձեւը' ատգահարցնելու համար իրենց օրուան ամէն ժամերուն մէջ ալ խմելը։

Աւօտած յոնքն ցնծութ կ'ելլէ (Թրքը. = Հասմաման) կոչ գայ. Աստուած մէկն իր տանելու կարողութենէն աւելի փորձութեան չ'ենթարկեր։

Աւօտած մարդ մարդուն ապէր չի խօսիր. Աստուած չարերուն անուղղակի կերպերով կը պատժէ։

Աւօտած ախտագին խնդացնել ուզէ նէ' երբէ կոծցնել, վերէն ալ գթալ կոծ գայ. Աղքատ մարդիկ իրենան ուրախութիւն չեն վայելեր. միշտ գժբախտ են։

Աւօտս (= Աստուծոյ) պահած գաղը' կ'ուզէ չ'ուտ գեր. Աստուծոյ պահպանածն անկարելի վտանգներէ կ'ազատի։

Աւօտս գեղացը կ'ուխտիսիլ. վերջին աստիճանի ազատչէլ, պատրաստիլ, թափառանդել։

Աւօտս օրը չի հոգներ. Գործ մը օրվ օր յետաձգելուն վերջը չի գար։

Աչիւս կոտն ասիլ, ամէն մարդ գոտն ասիլ. Ամէն մարդ իր տունը գանուելու է ժամանակին։

Աչիս ընկաղ նէ մարդս վերայ չի ցաւիր. Աչիս չափ չարսիրտ ու նախանձոտ է որ ամէնէն ձրի բաները իսկ կը գնանայ ուրիշներուն։

Աչիս ըլլա՞ով (Թրքը. = շաղախ) չի ծեփսիր. Ճշմարտութիւնը չի խափանուիր։

Արեգնոտ օրը հասատ կնոր գոտոզ չատ կ'ընենայ։ Առատաձեռնութեան օրերուն մէջ մարդուս օգնելը դիւրին է։

Բ.

Բանէն ձոտս է, խոսը խոսն չի գալ. Հեգնական օրինակ' որ եւ է թերութենէն մը անտեղի չատս գովուելիութենը ծագրելու համար։

Բոշքատակ չի, քանն ատանկ է. Ճշմարտութիւնն այս է։

Բանին մեջը բան կայ, պնակին մեջը բան կայ. Գործին մէջ տաբեր գաղտնիք կայ։

Բոշս գոտոզին քորքինդատ կը վաղի. Ամէն տեղ ոյ ինքնակոչ հրաւիրեսան է։

Բերնին գոտը գոտը կը հանի՛... Ծածկածս կը յայտնեմ, գաղտնիքդ երեւան կը բերեմ՛...։

Բոշն եւը հնձոցները էն նի' պոյը սէֆտին կերրնա՞ կոտ ըսեր է'. Գեշ, լկտի մարդը բանէ մը չ'ամչնար։

Բոտոզ վը նի' մ տերտեր. Եթէ յանցանք չունեին անտարբեր կեցիր։

Գ.

Գեղ երեվ վրայ կ'ընենայ, գոտ գան վրայ չըներ. Քանի մը անտեր միտսին չեն կրնար բնակիլ։

Գեղը չնէ՞ն մ քոգնինոր. Ժամանակէն առաջ մէ պատրաստուիր։

Գեղ գրացնէը մարդը հաճոյն (Թրքը. = անասկան կարասր) գեր կ'անե. Գեղ գրացին անասկան կարասի գոհ չտասով իր գրացիներուն կը ատիպե պանոնք որ իրենց չտնեցածը գտնեն։

Գելչերը մոտ վտակ, ցօրնը յոն ծոմե. Կ'ուզղուի ծոյլ մարդոց' որոնք ցորեկը պարապ բաներով ժամանակ կ'անցընեն եւ իրենց գործերը գիշերուան կը թողուն։

Գնչերը ե գոտոլը, գոտը ե էր խէյնը. Իրարու յարմար են։

Գնա գեսիր, եկո օրկոտ. Մեկուս մը մնհատնէն վերջը յարգը կը ճանչցուի։

Գողը գողն է գողացա, Աստած վերէն ղորմացա։

Գող օրորը գող.

Գործին ֆոխէր, հասյն չ'ծեի. Գոյլ ու անգործ է, բայց սեզանին գլուխը միշտ ներկայ է։

Գրպանի գոգոյին ընկած է[2]. Մահհատան վտանգներէ ազատած է։

Գրպին երկու երկան ալ իրտղալ է. Խնդրոյ մը ամէն կողմերը միանգամայն լսելու կամ քննելու է։

Դ.

Դանակը իմնան գովը կը գանէն, կ'ըսի իմը գառնէին. Գործին դիւրին միջոցը գործադրելու է։

---

[1] Այս ասացուածքն եւ ասոնց նման ուրիշ մէկ քանիներ ըստ ինքեան անհասկնալի կը ծնան եւ ուրիշ կերպով չեն կրնար ըմբռնուիլ ու բացատրուիլ' բայց եթէ անոնց ծագումը փնտռելով ժողովրդական առակի մը, զրոյցի մը կամ հեփսիի մը մէջ։ Եւ արդարեւ շատ անգամ կը պատահի որ այս կարգի զրոյցներուն մէկ նշանաւոր խօսքը կամ գանգիր ակնարկով բանաձեւ մը ժողովրդեան բերնին մէջ յեղյեղուելով վերջ ի վերջոյ առածի կարգ կ'անցնի, թէպետ եւ կրնայ ըլլալ որ անոր ծնունդ առած ոյժգր բոլորովին մոռցուած ըլլայ։

[2] Ցոյսնի է թէ ալյց (= աչաց) ձեւին վերջին ցն' ն ի փոխուած է նախորդ չին ազդեցութեամբն անոր նմանելու եւ հնչումը դիւրացնելու համար, — լեզուաբանական երեւոյթ մը' որ ամէն լեզուի ու բարբառի ալ առնչուած է։

---

[1] Ասկիս ի'անկարկէ անգլական հին սովորութիւն մը, որ եր անկոյսյանի բոզ կիները իշու վրայ երեսը դէպ ի գառակը, հնձացնել եւ քաղքին փողոցները պատճընելով նշտռակելէ ետեւ. ուրիշ քաղաք մը յայտնր գրկել.

[2] Այս առածը կ'անկարկէ գրազի (= ասասանսկի) մասին ժողովրդական հաւատացածն իբր թէ գրազը մարգոց հոգիները առնելով տապրակի մը մէջ կը ժողովէ կը տանի։

digitised by A.R.A.R.@

Դարբնոցագործ Աստած հասցնէ. Ընկարգուածքիւնները թիւր չառ ։ Աստուած բարեկարգէ։

Դէլուլ կը ծուկի, չիբեիճ կը պարպէ. Մէկ կողմի չափազանց շահախնդիր, միւս կողմի նայնքան շռայլ է։

Դուռն ցինի ըսէ, ճանճը պղտզոտին կոխ ըլլայ. Զրի վայելքի համար մարդ չի պակսիր։

Ե.

Եալ հէր (Թրք. = բարկութիւն) կոխ կ'ելլէ, չկրնէ հէր կ'ելլէ. Բարկութեան առեն գործուած անհամեմատութիւնը չի գտնուիր։

Եփէր պարթէ, ծարն է հարթէ. Պարագայ մը՝ ուրիկ խուսափելու ճարը չկայ։

Եփոս գրէմ, ին քոզ պղտիմ. Մարդ բնաւ անվճար պարտք թողնել չէ՝ իր մտհոգնէ վերջը։

Եզը եղով, մարիչը գերով. Անհնազ շռայլութեամբ կ'ծառէ կը խմէ։

Ես ալա, դուն ալա, կըզմիզը ՄԻՆ (= ով) ալա. Ամէն մարդ իր վիճակին համաձայն գործերով զառղելու է։

Ես ըսէը՝ առաջնայ ըսել ե. Եսամոլութիւնը, անձասաւանութիւնը սատանայական մոլութիւն մըն է։

Ես առաքի չը խանէի, քիւանէը կ'ելնես չը ծուլանիս Բարիք կամ օգնութիւն ապառելու առեն՝ չարձրաս հանդիսեցայ։

Ես ուղի վերի գառան ալ պիտայ, վրի գառան ալ. Միշտ եւ ամէն պարագայի մէջ նոյն մարդն եմ։

Երթնաս մանդաս գի՝ ինձակս գաղնցս. Լաւագունի յաւսով. կ'երթամ՝ բայց առաջին վիճակիդ փնտռելիք կ'ըլլաս։

Երես գառնի, առաջս ալ կ'ուզի. Շատ չփաացած է։

Երկնօղլ (= երկնից) արշտհալ (Թրք. = աղբեսագիր) պիտ պայ. Շափազանց բարձրհասակ է։

Երկոս խօսք պի-կիս (Թրք. = խոխոջդանք) մըն է. Համոզիչ խօսքերու ազդեցութիւնը շատ մեծ է։

Երկոս պիրգը գոտ է ծուկը. Երկու յամառ մարդիկ իրարու հետ չեն կրնար համաձայնիլ։

Երկոս ափս մել տման կը խոխի. Չափ շատ նեղը կը գնէ։

Երկըղի՝ հաց տանալ կընդայ. Օտարին ինչքը հաճոյքով կը վայելուի։

Երսան սա երկոս տալոտ ծիպո (Թրք. = գրպան) է. Բոլոր գաղտնիքները գիտեմ։

Եփած պտուրին կոտ չին խօսնէր. Կարգապրտած գործի մը մէջ համակել հարկ չէ՝ որ եւ է անձնական շահս եւս գիտաւորութեամբ։

Եփողին ծղէը՝ ղտփոլին վնդը. Բանաձեւ մը որով առանձիկները հետաքրքրասիրները կը մեծարէ ան-զանին գլուխը։

Եօթը ծանի գոսբ չէ՞ծ. Վերջին աստիճանի գէշ, անարգ մարդ։

Եօթը նէյոլ վերպէ. Բան՝ մը որ հանդիպողը կը գործածէ։

(Շարունակելի)

ՅՈՎՀ. ԴԱՎԱՆՅԵԱՆ

ՆԱԽԱՀԱՑԵՐԷՆ ՀԵՏՔԵՐ ՋՈՒԿԵՐԷՆԻՄ

Ա՛ՀԵՐ լեզուի զարգացման հետ հարեւանցի ծանօթին էլ յայտնի է, որ գրաբարի ոյ երկբարբառը կենդանի բարբառներում երեւան է գալիս ամիսուսած որպես ա, է կամ է օր. այս, աս, էս, էսիկ, էսիկ, էսի. գայլ, գալ, գէլ, (գիլու) սայլ, սալ, սէլ եւայլն։ Լեզուների զարգացման մի տարրական կանոնն է այս, որ սովորաբար նորը հնից աւելի կարճ եւ աւելի մշուսած է լինում։ — Զօկերէնը՝ (Ագուլիսի բարբառ) սակայն, այս ընդհանուր կանոնին տեղ տեղ կարծես չի ուզում հնազանդիլ։[1] — Շատ բառեր, որոնք ա, է կամ է ձեռին այլ բարբառներում, նա պահպանել է ոյ գրաբարի անաբաուսութեամբ. ինչպէս օրինակ, մայր, հայր եւայլն։ Իսկ մի շարք այլ բառերում, նոյն իսկ գրաբարի կարճ եւ ամիսուի ձեւը երկարում լայնացել, երկարացել է։ Օրինակ տէր՝ գոկերէնում գառնել է պոյր, միս՝-ոյս, սպիտակ՝-ոպոյկ, սիրել՝-ոյրէլ եւայլն։

Այս բառերի վերաբերմամբ վերեւի կանոնը գառնում է անկայուն, որովհետեւ նորգոկերէնն աւելի երկար ու լայն ձեւեր է ներկայացնում, քան հին-գրաբարը։

Ի՞նչպէս բացատրել այս երեւոյթը։ — ենթադրել, թէ գոկերէնը միւս լեզուներին անծանօթ եւ հակառակ կանոնով է զարգացել՝ անհատականի կը լինէր, որովհետեւ նոցա միացեալ տարրերում ամիսուման կանոնը կատարելապէս պահպանել է իւր գործութիւնն եւ այն շատ աւելի ազդու կերպով, քան միացեալ բարբառներից շատերում։ Այս պատճառով է՝ — գոկերէնում կարճանում է լեզուի զարգացման ընթացքին համեմատ գառնալով նօ, իսկ էլն, արդէն ամիսուի ձեւը երկարանում է, գառնալով էոյն, նոյն զարգացման հակառակ։ — Այս հակառակ է ոչ միայն ամիսուման յայտնի կանոնին, այլեւ տարրական տրամաբանութեանը։ Մեզ անկարելի է թւում, որ շարունակ կիրառութեան մէջ գտնուող մի ձեւ, փոխանակ մշտնջենու, ամէնքս լայնանալ — գառ-

[1] Տես Պարգամեան՝ Զօկերի բարբառը։

[1] Երեք բառը՝ որ մեր բառացուցակին մէջ ալ կ'երեւին, օտար ծագմանութիւնը առացած ըլլալու է ծմնորհիւ թիւրքերէնի նկ բառին որ թէ օտոյ կը նշանակէ եւ թէ ալեւոր, երիտ։